

ման կու տայ Յովակիմ Արքեպիսկոպոսին, որ կարենայ աւագ սարկաւագ ձեռնադրել Թէքիրտաղցի Պաղտասարեանց տիրացու Սարգիսը, որ Թէքիրտաղի Առաջնորդ Յակոբ Ա.ին աշակերտն է եւ անկէ վկայագիր ունի (Գիւ. Անտ.), զոր վերն յառաջ բերի:

Սարգիս Արքեպ. Սարաֆեանի հետեւող երրորդ բարձրաստիճան եկեղեցականն էր Յուսէօն Ա. Բուէնցի, Նուիրակ Արքեպիսկոպոսն Էջմիածնի, որ 1781ին Եւրոպա մեկնեցաւ ուղղափառաց մէջ իւր կեանքին վերջն անցընելու համար: Ասիկայ ծնած էր 1695ին ի Բասեն, եւ Էջմիածնի միաբան ըլլալով՝ Մինաս Ակնեցի կաթողիկոսէն (ընտր. 13 Յունիս, օծեալ 15 Սեպտ. 1751—1753 Մայիս 12 †) Արքեպիսկոպոս ձեռնադրուեցաւ: 1754ին Աղեքսանդր Բ. Բիւզանդացի Ղարաղաշ կաթողիկոսն Էջմիածնի (ընտրեալ 1754—1755 Նոյ. †) ղեկք Եւգոկիա իրրեւ Նուիրակ գտնելով՝ Նոյն քաղքին Առաջնորդ կարգեց (Չամչեան, Գ. 865). ուր 1755ին Էջմիածնէն եկող Թղթատարէն իմանալով՝ որ Աղեքսանդր կաթողիկոս վախճանած է, տեղոյն եկեղեցիներուն մէջ հրատարակեց՝ թէ Սահակ Ա. Ահազին, Չմիւռնիոյ Նուիրակ-Առաջնորդն է կաթողիկոս, ինչպէս ալ ի Կ. Պոլիսնոյն ընտրուեցաւ 20 Յունիս 1756: 1755ին Յարութիւն Արքեպ. Կ. Պոլիս եկաւ, եւ Յակոբ Պատրիարք անոր տեղ Բարսեղ Ա.ն Եւգոկիոյ Առաջնորդ դրաւ: 1756ին, երբ Սիմէոն Ա. Երեւանցի Էջմիածնի Նուիրակ եկաւ Կ. Պոլիս,